

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2004 թվականի N 1630-Ն

1371 ՀԱՄԱՊՐԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐԾԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՍԱԳՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 238 ՈՐՈՇՈՒՄՆ՝ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Համապատասխանության գնահատման մասին»² Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) համապատասխանության հավաստման բնագավառում սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման խորհրդի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) համապատասխանության հավաստման բնագավառում սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման խորհրդի գործունեության կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 12-ի «Համապատասխանության հավաստման բնագավառում սերտիֆիկացման մարմինները և փորձարկման լաբորատորիաները հավատարմագրելու մասին» N 238 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2004 թ. նոյեմբերի 25
Երևան

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ձ Մ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՉԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

- Կ. Ճշմարիտյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար (խորհրդի նախագահ)
- Գ. Բադալյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ)
- Ա. Շահինյան - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ
- Ս. Գալստյան - ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
- Վ. Դավիդյանց - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
- Կ. Սահակյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ
- Ռ. Դայան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի ստանդարտացման, չափազիտության և համապատասխանության հավաստման վարչության պետ
- Ջ. Դլիշյան - ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի նորմատիվամեթոդական վարչության պետ
- Մ. Մելիքյան - ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի տեխնիկական նորմավորման և ստանդարտացման բաժնի պետ
- Յու. Սիմոնյան - Հայաստանի շինարարների միության գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
- Մ. Հակոբյան - սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ (համաձայնությամբ)
- Ա. Եղոյան - սպառողների շահերի պաշտպանության միության նախագահ (համաձայնությամբ)
- Ա. Պողոսյան - սպառողների միության նախագահ (համաձայնությամբ)
- Ց. Գևորգյան - «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
- Ն. Մկրտչյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության հավատարմագրման գործակալության պետ (խորհրդի քարտուղար)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Կ Ա Ր Գ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐԽԼՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՉԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համապատասխանության հավաստման բնագավառում սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) ստեղծվել է «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) համաձայն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հավատարմագրման նպատակով:

2. Խորհուրդը գործում է օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի համաձայն:

II. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3. Խորհրդի նախագահը՝

ա) ղեկավարում է խորհրդի ընդհանուր գործունեությունը:

բ) հրավիրում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք, ստորագրում արձանագրություններն ու այլ անհրաժեշտ փաստաթղթեր, հետևում կարգի պահպանմանը:

գ) ներկայացնում է խորհուրդը՝ այլ մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում:

դ) կազմակերպում է քվեարկություն և հրապարակում դրա արդյունքները:

4. Խորհրդի քարտուղարը՝

ա) ընդունում ու գրանցում է հավատարմագրման հայտը և խորհրդի քննարկմանն է ներկայացնում օրակարգով նախատեսված՝ համապատասխանության հավաստման բնագավառում սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրմանը վերաբերող նյութերը:

բ) նախապատրաստում է խորհրդի նիստերը՝ խորհրդի անդամներին հայտնում է խորհրդի նիստի օրվա մասին և ուղարկում օրակարգը:

գ) վարում է խորհրդի նիստի արձանագրությունը:

դ) իրականացնում է այլ գործառնություններ՝ խորհրդի նախագահի հանձնարարությամբ:

5. Խորհրդի անդամները՝

ա) պարտավոր են մասնակցել խորհրդի նիստերին:

բ) իրավունք ունեն ելույթ ունենալու և տեսակետ արտահայտելու քննարկվող հարցի շուրջ:

գ) խորհուրդ են ներկայացնում առաջարկություններ:

դ) իրավունք ունեն քվեարկելու և արտահայտելու հատուկ կարծիք, որը, նրանց պնդմամբ, կցվում է խորհրդի ընդունած որոշմանը:

ե) խորհրդի նախագահի հանձնարարությամբ կարող են ներկայացնել խորհուրդն այլ մարմիններում և կազմակերպություններում:

III. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

6. Խորհրդի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավասությունների սահմաններում որոշումներ ընդունելու համար՝ խորհրդի քարտուղարի ներկայացմամբ, սակայն առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ: Հավատարմագրման վերաբերյալ որոշման ընդունման դեպքում հավատարմագրված անձին խորհրդի կողմից տրվում է նույնականացման նշագիր:

7. Խորհրդի ընթացիկ գործունեությունը կազմակերպում է խորհրդի նախագահը:

8. Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում, խորհրդի նախագահի հանձնարարությամբ, խորհրդի նախագահի տեղակալը կամ խորհրդի մեկ այլ անդամ:

9. Խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե նրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

10. Խորհրդի անդամներին խորհրդի նիստի օրակարգը տրամադրվում է նիստից առնվազն 7 օր առաջ:

11. Խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկումն սկսվում է օրակարգն ընդունվելուց հետո:

12. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, նիստին ներկա անդամների պարզ մեծամասնությամբ: Չայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ծայնը վճռորոշ է:

13. Խորհրդի նիստին հրավիրվում են հավատարմագրմանը հավակնող սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների ղեկավարները:

14. Խորհուրդն իր գործունեության հետ կապված բողոքները քննարկելու համար խորհրդի կազմից ստեղծում է բողոքարկման հանձնաժողով՝ կազմված 3 անդամից, որին կարող են դիմել հավատարմագրման հայտատուները և հավատարմագրված անձինք: Բողոքարկման հանձնաժողովը բողոքները քննարկում և արդյունքները մեկ ամսվա ընթացքում ներկայացնում է հավատարմագրման խորհուրդ:

15. Անհրաժեշտության դեպքում խորհրդի որոշումները կարող են ընդունվել հարցման կարգով՝ խորհրդի անդամների կողմից գրավոր ներկայացված քվեներին համապատասխան:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան